ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

ԶԻՆՏԵՔՍՏԻԼ ՍՊԸ-ն ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/19 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
11	Ստորև ներկայացված ապրանքները պատրաստվում են Հայաստանի Հանրապետության կառավարության 20.12.2018թ. N 1517-Ա որոշմամբ հաստատված չափորոշիչներին և ձևերին (նկարներին) համապատասխան: Վերնաշապիկ (կարճաթև)՝ ուսադիրներով (Ձև 12): Վերնաշապիկ (բաց կապույտ՝ ընդհանուր խմբաքանակի առնվազն 90 տոկոսը, և սպիտակ), որը պատրաստվում է 60% բամբակյա խիտ կտորից (40% պոլիեսթեր, 190 գ/մ2), կարճաթև՝ հանվող ուսադիրներով, ծալովի օձիքով: Վերնաշապիկը կոճկվում է 7 կոճակով, վերևի մասում առանց կոճակի: Առաջամասերին մշակված են ձևավոր ծալքով և կափույրով գրպաններ, որոնք կոճկվում են մեկ օղակ կոճակով: Վերնաշապիկի ներքևի մասում կարվում է 55 մմ լայնությամբ գոտի՝ կողքային մասերում 12-18 սմ երկարությամբ ներկարված առաձգական ժապավենով: Առջևի մասի գոտին կոճկվում է 2 կոճակով: Կանացի վերնաշապիկը՝ առջևից գրպանների տակից մինչև գոտին, ունի սեղմոն և կոճկվում է ձախից: Ձախ թևքին առկա է թևքանշան (Ձև 20): Նախքան վերնաշապիկների պատրաստումը վերնաշապիկների գունային գամման համաձայնեցվում է Գնորդի հետ: Վերնաշապիկների ամբողջ քանակը պետք է պատրաստվի միևնույն գործվածքից: Ընդ որում, նախապես (մինչև վերնաշապիկների կարելը) Վաճառողը Գնորդին է ներկայացնում նշված գործվածքի բաղադրության, կարգի, ներկի կայունության և մակերեսային խտության վերաբերյալ ՀՀ-ում հավատարմագրված կազմակերպության կողմից տրված լաբորատոր հետազոտության եզրակացություն: Կանացի և տղամարդու վերնաշապիկների քանակները՝ համաձայն ձևավորված պատվերի: Ապրանքների փաթեթավորումը՝ պոլիէթիլենային թափանցիկ պարկերով, պարկերի վրա պետք է նշված լինեն անվանումները ըստ վերցված

	անհատական չափսերի, պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինեն ապրանքի անվանումը, քանակը, չափսերը:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

Текстиль Пип в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/19 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
11	Ниже представленные товары создаются в соответствии с критериями и формами (фотографиями), утвержденными постановлением Правительства Республики Армения N 1517-А от 20.12.2018г. Сорочка (с короткими рукавами) с погонами (Форма 12). Сорочка (светло-синяя, не менее 90 процентов от общей партии и белая), которая изготовливается из плотной хлопковой ткани 60% (40% полиэстер, 190 г/м2), с короткими рукавами, со съемными погонами, со складным воротником. Сорочка застегивается на 7 пуговиц, в верхней части без пуговицы. В передней части разработаны карманы с фигурными складками и клапанами, которые застегиваются на одну пуговицу круг. В нижней части сорочки шьется пояс шириной 55 мм, в боковых частях - со вшитыми эластическими лентами длиной 12-18 см. Пояс передней части застегивается на 2 пуговицы. Женская сорочка в передней части с низа карманов до пояса имеет вытачку и застегивается слева. На левом рукаве есть шеврон (Форма 20). До изготовления сорочек цветовая гамма сорочек согласуется с Покупателем. Полное количество сорочек должно изготавливаться из одинаковой ткани. При этом, заранее (до шитья сорочек) Продавец представляет Покупателю выданное аккредитованной в РА организацией заключение лабораторного исследования о составе, категории, стабильности краски и поверхностной плотности указанной ткани. Количества женских и мужских сорочек - согласно сформировавшемуся заказу. Упаковка товаров - в полиэтиленовых прозрачных пакетах, на пакетах должны быть отмечены наименования согласно взятым индивидуальным размерам, маркированы, на марках должны быть отмечены наименование, количество,

	размеры товара.